ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4549-Ա « 16 » սեպտեմբերի 2026թ.

ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Որոշմամբ լուծվող հարցի նկարագրությունը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Ռոբերտ Առաքելյանի 2026 թվականի օգոստոսի 21-ի թիվ Դ-89034-26 դիմումի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան իրականացվել է վարչարարություն:

2026 թվականի օգոստոսի 21-ի թիվ Դ-89034-26 դիմումի քննության կապակցությամբ 2026 թվականի սեպտեմբերի 4-ին, ժամը 11:00-ին հրավիրվել են լսումներ, որի մասին 2026 թվականի օգոստոսի 24-ի թիվ 07/115044-26 գրությամբ և «advocate.arakeliian@gmail.com» էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցվել է Ռոբերտ Առաքելյանը, սակայն վերջինս լսումներին չի ներկայացել:

Ուսումնասիրելով 2026 թվականի օգոստոսի 21-ի թիվ Դ-89034-26 դիմումը, դիմումին կից ներկայացված ապացույցները, գնահատելով դիմումի առարկային առնչվող բոլոր փաստական հանգամանքները, պարզվել է հետևյալը.

2. Որոշման կայացման համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված 2026 թվականի օգոստոսի 21-ի թիվ Դ-89034-26 դիմումով Ռոբերտ Առաքելյանը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել 2026 թվականի մայիսի 29-ին ժամը 23:40-ի դրությամբ Երևան քաղաքի Արղության 1-ին փակուղու թիվ 1/21 հասցեի հարակից երթևեկելի մասում առկա ճանապարհային երթևեկության համար վտանգավոր փոսի առկայության պայմաններում ճանապարհահատվածի անվտանգ վիճակն ապահովելու, վտանգը վերացնելու կամ, մինչև դրա վերացումը, երթևեկությունը սահմանափակելու և ճանապարհային երթևեկության մասնակիցներին վտանգի մասին նախազգուշացնելու՝ օրենքով սահմանված պարտականությունները չկատարելու Երևանի քաղաքապետարանի անգործությունը:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդի ծառայողների կողմից 2026 թվականի մայիսի 29-ին կազմվել է նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարի մասին թիվ 106224 արձանագրությունը, որի համաձայն՝ նշված օրը Ռոբերտ Առաքելյանի վարած «Tesla» մակնիշի «10 RA 011» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի մասնակցությամբ Երևան քաղաքի Արղության

1-ին փակուղի թիվ 1/21 հասցեի տարածքում տեղի է ունեցել ճանապարհա-տրանսպորտային պատահար, ինչի կապակցությամբ նաև կազմվել է պատահարի վայրի սխեմա, որում գծագրվել է ճանապարհի քանդված հատվածը՝ փոսը:

«Խաչատուրով» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետների կողմից 2026 թվականի հունիսի 18-ին կազմված թիվ 26-2256 ավտոտեխնիկական և ապրանքագիտական եզրակացության (այսուհետ՝ Եզրակացություն) «Հետևություն» բաժնի ավտոտեխնիկական մասի համաձայն՝ առաջադրված պայմաններում «Tesla» մակնիշի «10 RA 011» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդը տվյալ պատահարը կանխելու տեխնիկական հնարավորություն չի ունեցել, և նրա կողմից թույլ տրված այնպիսի գործողություններ, որպիսիք տեխնիկական տեսակետից հակասեին ՃԵԿ-ի պահանջներին և պայմանավորած լինեին տվյալ պատահարի առաջացումը, չեն դիտվում: Փորձագետը գտել է, որ առաջադրված պայմաններում ճանապարհի և դրա ինժեներական կառույցների պահպանման համար պատասխանատու պաշտոնատար և այլ անձինք՝ տեխնիկական տեսակետից թույլ են տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող գործողություններ, դրանցով իսկ պայմանավորել տվյալ պատահարի առաջացումը:

3.Վարչական ակտն ընդունելու հիմնավորումները.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում առաջացող հարաբերությունները, սահմանում է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի պետական քաղաքականության սկզբունքները և ուղղությունները, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման իրավական հիմքերը, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման բնագավառի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաև ճանապարհային երթևեկության մասնակիցների իրավունքները և պարտականությունները:

Օրենքի 9.1-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ ներքին գործերի լիազոր մարմին) վերահսկողություն է իրականացնում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ և ձեռնարկում օրենքով նախատեսված միջոցներ, իսկ նույն հոդվածի 1-ին մասի «է» հսկողություն է իրականացնում ճանապարհները և դրանց ինժեներական կառույցները, ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները տեխնիկական նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու նկատմամբ, ներկայացնում հայտնաբերված խախտումների վերացման պահանջներ:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը կազմակերպում և անցկացնում է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ կանխարգելիչ միջոցառումներ:

Օրենքի 1-ին, 9.1-րդ և 10-րդ հոդվածներով նախատեսված՝ վերը մեջբերված իրավանորմերից հետևում է, որ անվտանգ երթևեկություն ապահովելու գործառույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից և դրա հետ կապված իրականացված վարչարարության (գործողություն կամ անգործություն) շուրջ ծագած վեճերով Երևանի քաղաքապետը չի հանդիսանում իրավասու պատասխանատու վարչական մարմին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում, որպես պատվիրակված լիազորություն, իրականացրել է Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով:

2026 թվականի օգոստոսի 30-ին ուժի մեջ մտած ՀՕ-387-Ն օրենքով փոփոխված՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում, որպես պատվիրակված լիազորություն, իրականացնում է Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նշված օրենքը սահմանում է ավտոմոբիլային ճանապարհների բնագավառում Հայաստանի Հանրապետության քաղաքականության մշակման՝ ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման ու կառավարման, ճանապարհների դասակարգման, տեխնիկական վիճակի գնահատման, գրանցման տնտեսական, իրավական և կազմակերպական հիմքերը, ճանապարհների նախագծման, շինարարության (կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման, միջին նորոգման (նորոգման), դրանց կահավորման ու պահպանման, հսկողության, վերահսկողության, ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման, ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման, ավտոմոբիլային ճանապարհների և թունելների անվտանգության աուդիտի իրականացման նկատմամբ հիմնական պահանջներն ու սահմանափակումները:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության բոլոր ավտոմոբիլային ճանապարհների վրա, բացառությամբ բնակավայրերի փողոցների (ճանապարհների) կամ փողոցների (ճանապարհների) մաս կազմող հատվածների, որոնք

օրենքի համաձայն հաստատված ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մասեր չեն:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է Հայաստանի Հանրապետության ճանապարհների հետևյալ դասակարգումը.

«1. Հայաստանի Հանրապետության ճանապարհները՝ ըստ օգտագործման տեսակի, դասակարգվում են՝

ա) ընդհանուր օգտագործման ճանապարհներ.

բ) ոչ ընդհանուր օգտագործման ճանապարհներ:

2. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ճանապարհները դասակարգվում են՝

ա) ավտոմոբիլային ճանապարհներ.

բ) բնակավայրերի (համայնքների) փողոցների ճանապարհներ:

3.Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները՝ ըստ սեփականության ձևի, դասակարգվում են՝

ա) պետական ավտոմոբիլային ճանապարհներ.

բ) ոչ պետական ավտոմոբիլային ճանապարհներ:

4. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները՝ ըստ նշանակության, դասակարգվում են՝

ա) միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներ).

բ) հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներ).

գ) մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներ):

5.Բնակավայրերի (համայնքների) փողոցները (ճանապարհները)՝ ըստ նշանակության, դասակարգվում են՝

ա) Երևանի քաղաքային նշանակության ճանապարհներ (բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների).

բ) քաղաքային նշանակության ճանապարհներ (բացառությամբ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների).

գ) գյուղական նշանակության ճանապարհներ (բացառությամբ գյուղական համայնքի միջով անցնող միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների):»:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 112-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 265-Ն որոշման 4-րդ կետով սահմանվել է, որ Երևան քաղաքի տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական հանրապետական նշանակության

ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածները գտնվում են Երևանի քաղաքապետի տնօրինման և կառավարման ներքո:

2026 թվականի օգոստոսի 21-ի թիվ Դ-89034-26 դիմումում նկարագրված փաստերի համաձայն՝ վնասի առաջացմանը հանգեցրած պատահարը տեղի է ունեցել Երևան քաղաքի Արղության 1-ին փակուղում, որը ներառված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշմամբ հաստատված՝ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում և իրենից ներկայացնում է բնակավայրի ճանապարհ, հետևաբար քննարկվող իրավահարաբերությունների նկատմամբ դիմումատուի մատնանշած՝ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի դրույթներն ու կարգավորումները կիրառելի չեն:

Վերոգրյալից հետևում է, որ 2026 թվականի օգոստոսի 21-ի թիվ Դ-89034-26 դիմումով ներկայացված՝ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջն անհիմն է, քանի որ նախ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը չի հանդիսանում Երևանի քաղաքապետի լիազորությունը, բացի այդ, անկախ խնդիրը Երևանի քաղաքապետարանի պատասխանատվության ներքո չգտնվելու հանգամանքից, քննարկվող պարագայում չի ներկայացվել որևէ ապացույց, որը կվկայեր նախքան պատահարը տեղի ունենալը պատահարի տարածքում առաջացած փոսը կամ ասֆալտի անհարթությունը վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության կապակցությամբ իրավասու մարմնի կողմից Երևանի քաղաքապետարանին տեղեկացնելու, ինչպես նաև նկարագրված խնդրի մասին տեղեկացված լինելու պայմաններում ու օրենքով նախատեսված գործողությունները կատարելու համար անհրաժեշտ ժամկետում Երևանի քաղաքապետարանի կողմից միջոցներ չձեռնարկելու վերաբերյալ:

2026 թվականի օգոստոսի 21-ի թիվ Դ-89034-26 դիմումի քննության վարույթով չեն հիմնավորվել տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող Երևանի քաղաքապետի կողմից «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի իմաստով ճանապարհի անվտանգ երթևեկությունն ապահովող իրավասու մարմին հանդիսանալու, նույն օրենքի պահանջների շրջանակներում անգործություն դրսևորած լինելու, պատահարին առնչվող պայմաններում ճանապարհի անվտանգ երթևեկությունն ապահովելու տեսակետից նույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող գործողություններ կատարած լինելու և դրանցով իսկ ենթադրյալ վնասին հանգեցրած պատահարի առաջացումը պայմանավորելու հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 1-ին, 9.1-րդ և 10-րդ հոդվածների դրույթները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Երևանի քաղաքապետարան հասցեագրված՝ Ռոբերտ Առաքելյանի 2026 թվականի օգոստոսի 21-ի թիվ Դ-89034-26 դիմումով ներկայացված Երևանի քաղաքապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը՝ մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ